«Հ. Օշական» գրքի շնորհադես և «Հ. Կարպենց» կրթաթոշակի հանձնում

2011

Ս.թ.-ի դեկտեմբերի 20-ին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ սփյուռքահայ անվանի արձակագիր Հակոբ Օշականին նվիրված գիտաժողովի զեկույցների ժողովածուի շնորհանդեսը: Բացման խոսքով հանդես եկան ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանը, «Համազգային» հիմնադրամի նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանը և ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Վազգեն Գաբրիելյանը:

Արծրուն Ավագյանն իր և ԵՊՀ ռեկտորի անունից շնորհակալական խոսք ուղղեց գրքի հեղինակներին, գիտաժողովի և այսօր արդեն շնորհանդեսի կազմակերպիչներին և Օշականով լցված հյուրերին: Նա նշեց, որ սա ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի և Համազգային հայ կրթական և մշակութային հիմնադրամի համատեղ ջանքերով ծնված թվով 4-րդ գիրքն է:

Լիլիթ Գալստյանն իր ողջույնի խոսքում հպարտությամբ և ուրախությամբ կարևորեց ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հետ համատեղ ձեռնարկները (Տիգրան Մեծ, Լևոն Շանթ, Համաստեղ, Հակոբ Օշական), որոնք իրենց հետագիծը թողել և շարունակում են թողնել հայ մշակույթի, գրականության մեջ: Նա նշեց, որ «Հակոբ Օշական» գիտաժողովը, որի արդյունքն առկա է այսօր, նպատակ էր ունեցել ոչ առաջին, և ոչ էլ վերջին անգամ ներկայացնել, բացահայտել և գրականություն վերադարձնել բացառիկ հարստություն, եզակիություն, գրականագիտական միտք և փիլիսոփայություն ունեցող մեծությանը՝ Հակոբ Օշականին, և որ այսօր այդ փորձը և ձգտումը ազնիվ է, արդարացված և գնահատելի:

Վազգեն Գաբրիելյանն իր խոսքում շնորհավորեց բոլորին նախաձեռնությունների շարքի համար՝ մաղթելով, որ Համազգայինը շարունակի սկսած ավանդույթը տարբեր գրողների գրական

ստեղծագործական, քնարական մտքի ներկայացմամբ, գնահատմամբ և նոր սերնդին փոխանցելու առաքելությամբ:

Շնորհանդեսի մասնակիցներին և կազմակերպիչներին իրենց երախտիքի խոսքերն ուղղեցին Սփյուռք գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանը, ԵՊՀ պրոֆեսոր, ԲԳԴ Կիմ Աղաբեկյանը, ԵՊՀ դասախոս, ԲԳԴ Սամվել Մուրադյանը և ուրիշներ:

Շնորհանդեսին հետևեց Համազգայինի համար ավանդույթ դարձած **«Հակոբ Կարապենց»** կրթաթոշակի հանձնման արարողությունը: «Համազգային» հիմնադրամի նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանը նշեց, որ կրթաթոշակառուները այն հույսն են, ովքեր պետք է շարունակեն իրենց կերպը գրականության, գրականագիտության մեջ:

Կրթաթոշակի արժանացան ԵՊՀ Բանասիրության, Ժուռնալիստիկայի, ՀՊՄՀ Բանասիրության ֆակուլտետների 6 լավագույն ուսանողներ:

Կրթաթոշակառու, ԵՊՀ Բանասիրության ֆակուլտետի ուսանող Գոռ Հարությունյանը բոլորի անունից շնորհակալություն հայտնեց Համազգայինին՝ խրախուսելով իր սերնդակից ստեղծագործ երիտասարդներին շարունակել իրենց նվիրական գործն ուղղված հայ գրականության ու մշակույթի զարգացմանը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
HAMAZGAYIN ARMENIAN EDUCATIONAL & CULTURAL SOCIETY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

2011 recipients of Karapents scholarship

ՑԱՆԿ

Համազգայինի «Հակոբ Կարապենց» 2010-2011 ուս. տարվա կրթաթոշակառուների

	Անուն Ազգանուն	ԲՈՒՀ	Գումարը (ՀՀ դրամ)	Ստորագրություն
1.	Սահականուշ Պետրոսյան Sahakanoush Petrosyan	ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակ.-2-րդ կուրս	75 000	
2.	Նարե Սահակյան Nareh Sahakyan	ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակ.-3-րդ կուրս	75 000	
3.	Անժելա Միքայելյան Angel Michayelyan	ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ, 4-րդ կուրս	75 000	
4.	Գոռ Հարությունյան Gor Haroutunyan	ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ, 3-րդ կուրս	75 000	
5.	Հրանտ Սարաֆյան Hrant Sarafyan	ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս	75 000	
6.	Սիրանուշ Ստեփանյան Siranoush Stepanyan	ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս	75 000	